

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Պաշտոնի (գրադուսքի) անվանումը	Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի սպասարկման և նորոգման տեխնիկ
Դերը	Մոնտաժում, կարգաբերում, վերանորոգում և սպասարկում է ռադիոէլեկտրոնային տեխնիկայի սարքավորումները, տեղադրում անտենաներ և օգտագործողին տալիս է ճիշտ խորհրդատվություն
Խնդիրների բնագավառ 1	Բացահայտել ռադիոէլեկտրոնային տեխնիկայի անսարքությունների և թերությունների պատճառները
Աշխատանքային գործընթացը	Սարքավորման տիպին և տեսակին համապատասխան ուրվագծում է անսարքությունների ենթադրվող պատճառները, դրանցից յուրաքանչյուրի հիմնավորման համար կատարում է անհրաժեշտ ստուգումներ և գրանցում անսարքության իրական պատճառը.
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • սարքավորման տվյալ անսարքության հնարավոր պատճառների շրջանակը ուրվագծված է • անսարքության իրական պատճառները անսխալ ախտորոշված են:
Խնդիրների բնագավառ 2	Ըստ պահանջի փոխել տարրերը և հանգույցները՝ պահպանելով սահմանված տեխնոլոգիան
Աշխատանքային գործընթացը	Տեխնիկական պահանջները պահպանելով ապամոնտաժում և տարանջատում է շարքից դուրս եկած տարրերն ու հանգույցները, տեղադրում նորերը՝ կատարելով միջանկյալ չափումներ, ստուգումներ՝ պահպանելով տեխնոլոգիական հաջորդականությունը.
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • տարրերի ապամոնտաժումը կատարվում է դրանց համար սահմանված ռեժիմները պահպանելով, • տարրերի ապամոնտաժումը կատարվում է պահպանելով աշխատանքների ճիշտ հաջորդականությունը, • տարրերի ընտրության ժամանակ պահպանվել է դրանց էլեկտրական բնութագրերի համատեղելիությունը, • տարրերի տեղադրման աշխատանքների հաջորդականությունը և ռեժիմները պահպանվում են, • տարրերի տեղադրման ճշգրտության ստուգումները կատարվում են:
Խնդիրների բնագավառ 3	Ստուգել և փորձարկել վերանորոգված սարքավորումների աշխատանքը
Աշխատանքային գործընթացը	Ստուգում է վերանորոգված սարքավորման աշխատանքը շահագործման բոլոր հնարավոր ռեժիմներում.
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • սարքավորումը շահագործման բոլոր ռեժիմներում նորմալ է աշխատում • ռեժիմների փոփոխությունների ընթացքում աշխատանքի շեղումներ չեն առաջանում:
Խնդիրների բնագավառ 4	Տեղադրել և կարգավորել անտենաների աշխատանքը
Աշխատանքային գործընթացը	Տեղադրում և համալարում է տարբեր ռադիոէլեկտրոնային սարքավորումների հետ օգտագործվող անտենաները պահպանելով

<p>Կատարման չափանիշներ</p>	<p>համապատասխան կանոնները: Ըստ անհրաժեշտության խորհրդատվություն է տրամադրում համապատասխան անտենայի ընտրելու գործում.</p> <ul style="list-style-type: none"> • անտենան ճիշտ է ընտրված, • անտենայի տեղը ճիշտ է ընտրված, • անտենայի դիրքը ճիշտ է ընտրված, • անտենայի համակարգի միացումները ճիշտ են կատարված, • շահագործման տարբեր ռեժիմներում անտենային համակարգը ճիշտ է աշխատում:
<p>Խնդիրների բնագավառ 5 Ապահովել համատեղ աշխատող սարքերի աշխատանքի համատեղելիությունը</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p> <p>Կատարման չափանիշներ</p>	<p>Հաշվի առնելով համատեղ աշխատող տարբեր սարքավորումների աշխատանքի ռեժիմները կարգավորում է դրանց աշխատանքը՝ նպատակ ունենալով ապահովել առավել որակյալ շահագործում</p> <ul style="list-style-type: none"> • տարբեր սարքավորումների աշխատանքային ռեժիմների պարամետրերը գնահատված են, • ապահովված է սարքավորումների և համալարող սարքերի համատեղելիությունը շահագործման առումով:
<p>Խնդիրների բնագավառ 6 Կարգավորել սարքավորումների աշխատանքի օպտիմալ ռեժիմները</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p> <p>Կատարման չափանիշներ</p>	<p>Հաշվի առնելով սարքավորումների տարբեր հանգույցների աշխատանքային յուրահատկությունները՝ վերանորոգման աշխատանքներ կատարելիս ապահովում է դրանց աշխատանքի նպատակահարմար ռեժիմները:</p> <p>Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ փոփոխությունների միջոցով կարգավորում է այդ ռեժիմները.</p> <ul style="list-style-type: none"> • ներկայացվում է սարքավորման տարբեր հանգույցների աշխատանքը բնութագրող հիմնական չափանիշները, • սահմանում է աշխատանքի օպտիմալ ռեժիմները, կատարում է աշխատանքային ռեժիմների կարգավորում:
<p>Խնդիրների բնագավառ 7 Խորհրդատվություն տրամադրել օգտագործողներին</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p> <p>Կատարման չափանիշներ</p>	<p>Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի շահագործողներին անհրաժեշտ խորհրդատվություն է տրամադրում տարբեր սարքավորումների պահպանման, շահագործման, սպասարկման հարցերի վերաբերյալ.</p> <ul style="list-style-type: none"> • ըստ կոնկրետ պայմանների շահագործողները ստացել են օրյեկտիվ խորհրդատվություն • առօրյա շահագործման ընթացքում կանխում է սարքավորումների շարքից դուրս գալը • սարքավորումներն անխափան շահագործվում են:
<p>Պատասխանատվությունը - բարդության աստիճանը</p>	
<p>Բարդությունը</p>	<ul style="list-style-type: none"> • ճիշտ է գնահատում անսարքության և վերանորոգման աշխատանքային բարդությունները, • ճիշտ է գնահատում ռադիոէլեկտրոնային սարքավորման բարդությունը, կարևորությունը և արժեքը:
<p>Պատասխանատվությունը</p>	<p>Անսարքությունները ճիշտ խիտորոշելու համար տեխնիկը</p>

	<p>պատասխանատու է՝</p> <ul style="list-style-type: none"> վերանորոգման աշխատանքները որակյալ կատարելու համար, նյութերը խնայողաբար օգտագործելու համար, ճիշտ խորհրդատվություն տրամադրելու համար, աշխատանքների հետ կապված ծախսումները հաշվելու վերաբերյալ, տեղեկատվություն տրամադրելու համար:
Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, վերաբերմունք	
Լեզուներ	հայերեն - գերազանց երկու օտար լեզու - բավարար
Համակարգիչ	MS Word - բավարար
Գիտելիքները	<ul style="list-style-type: none"> Էլեկտրատեխնիկայի հիմունքներ Ճարտարագիտական գրաֆիկա Վերանորոգման աշխատանքներում օգտագործվող նյութերի հատկությունները Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի աշխատանքի սկզբունքները Տարրերի պարամետրերի բովանդակությունը
Կարողությունները և հմտություններ	<ul style="list-style-type: none"> անսարքությունների պատճառները բացահայտելու կարողություն, անսարքությունների վերացման կարողություններ, սպասարկման հմտություններ, անհրաժեշտ տարրերն ընտրելու կարողություն սարքավորումներ օգտագործելու հմտություն տեղեկատու գրականությունից օգտվելու հմտություն գծագրերը և սխեմաները կարդալու հմտություն տարրերը տեղադրելու և ապամոնտաժելու հմտություն սարքավորումների աշխատանքը կարգավորելու կարողություն
Վերաբերմունքը	Պարտաճանաչ, կարգապահ, հաղորդակցվող, խնայող, ճշտապահ, մաքրասեր, հումորի զգացում ունեցող, նորը ընկալող

2014 «ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄ (ըստ ճյուղերի)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի սպասարկման և նորոգման տեխնիկը պետք է՝

- տարբերակի ռադիոէլեկտրոնային տարրերը,
- իմանա ռադիոէլեկտրոնային տարրերի պարամետրերի չափման, ստուգման, մակնիշավորման և գունային կողավորման սկզբունքները,
- կարողանա օգտվել տեղեկատու և տեխնիկական գրականությունից ու փաստաթղթերից,

- կարողա ռադիոէլեկտրոնային սարքավորումների, դրանց հանգույցների էլեկտրական սխեմաները, կազմի էլեկտրական սխեմա՝ ըստ տեխնիկական առաջադրանքի, հասկանա աշխատանքի սկզբունքը,
- կարողանա ըստ նշանակության ճիշտ ընտրել և օգտագործել չափման միջոցները, գործիքները,
- կարողանա ստուգել ռադիոէլեկտրոնային սարքավորման աշխատանքային վիճակը (առանձին հանգույցների բնութագրիչ ադրանշանների և աշխատունակության ստուգում, շեղումների հայտնաբերում, սնուցման առկայության),
- պահպանելով անվտանգության կանոնները կատարի էլեկտրական չափումներ չափիչ - ստուգիչ սարքերով,
- պահպանելով անվտանգության կանոնները, ըստ առաջադրանքի, կատարի ռադիոէլեկտրոնային սարքավորումների վերանորոգում, համալարում, կարգաբերում ու տեխնիկական սպասարկում,
- կարողանա ախտորոշել, հայտնաբերել և վերացնել ռադիոհաղորդիչի և ռադիոընդունիչի տիպային անսարքությունները (սարքավորումը չի միանում, ձայնային ազդանշանը բացակայում է, աղավաղված է և այլն),
- կարողանա ախտորոշել, հայտնաբերել և վերացնել հեռուստացույցի տիպային անսարքությունները (հեռուստացույցը չի միանում, բացակայում է ձայնային ազդանշանը, բացակայում է պատկերը կամ աղավաղված է, բացակայում է տողակադրային փոումը, հեռուստացույցը չի կառավարվում, ազդանշանը բացակայում է մուտքային շղթայում և այլն), կատարի անտենային համակարգի տեղադրում, անհրաժեշտ միացումներ, կարգավորում,
- կարողանա ախտորոշել, հայտնաբերել, վերացնել ձայնա- և տեսագրող, վերարտադրող սարքավորումների տիպային թերությունները (սարքավորումները չեն միանում, չեն աշխատում, բացակայում է ձայնը, պատկերը, անորակ ձայնա- և տեսագրում, անորակ ձայնա- և տեսա վերարտադրում և այլն),
- կարողանա ախտորոշել, հայտնաբերել, վերացնել բջջային և DECT հեռախոսների, հեռախոսահամարի ավտոմատ որոշիչի, միկրոալիքային վառարանի, լվացքի մեքենայի, սառնարանի, օդորակիչի, թվային տեսախցիկի, ֆոտոխցիկի և էլեկտրոնային կառավարմամբ կենցաղային այլ սարքավորումների տիպային թերությունները (սարքավորումները չեն միանում, չեն աշխատում, բացակայում է ձայնը, պատկերը, անորակ ձայնա- և տեսագրում, անորակ ձայնա- և տեսա վերարտադրում և այլն),
- կարողանա հայտնաբերել, վերացնել տպահարթակներում առաջացած թերությունները (թույլ միացում, օքսիդացում, ճեղքվածքներ, աղտոտվածություն և այլն):